

Շատին համայնքի 2011 թ. բյուջե

*Ըստ աշխատանքների կատարման
արդյունքների ձևաչափով*

Բովանդակություն

Ներածություն	2
Համայնքի ղեկավարի ուղերձը	3
Համայնքի առաքելությունը	4
Համայնքի ռազմավարական նպատակն ու խնդիրները	4
Համայնքի տեսլականը	4
Համայնքի իրավիճակի վերլուծություն	5
1. Ընդհանուր տվյալներ	5
2. Պատմական ակնարկ	5
3. Ֆիզիկա-աշխարհագրական պայմաններ	6
4. Ժողովրդագրություն	7
5. Տեղական ինքնակառավարման մարմիններ	10
6. Առողջապահություն	11
7. Համայնքի սեփականություն	11
8. Բնություն և շրջակա միջավայրի պահպանություն	12
9. Կրթություն, մշակույթ և սպորտ	12
10. Բնակարանային տնտեսություն	14
11. Աղբահանություն	15
12. Խմելու ջրի ջրամատակարարում և ջրահեռացում	16
13. Կոյուղի	17
14. Գյուղատնտեսություն	17
15. Արդյունաբերություն	19
16. Գանապարհային տնտեսություն	19
17. Տրանսպորտ և կապ	22
18. Առևտուր և սպասարկում	23
19. Գազամատակարարում	23
20. Հողօգտագործում	24
Համայնքի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում	26
Ռազմավարական հիմնահարցեր, նպատակներ և երկարաժամկետ խնդիրներ	28
Երկարաժամկետ խնդիրների առաջնահերթությունների սահմանում	34
Առաջնահերթ երկարաժամկետ խնդիրներ և դրանց ծախսեր	39
Առաջնահերթ երկարաժամկետ խնդիրների ծախսերի բաշխումն ըստ տարիների	45
Տարեկան խնդիրների կողավորում ըստ առաջնահերթության	49
Տարեկան խնդիրների կատարման ցուցանիշներ	50
Հավելվածներ	52
Օգտագործված գրականության ցանկ	55

Ներածություն

ՀՀ Տեղական ինքնակառավարման մարմինների կոչումն է օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում ապահովել հանրային խնդիրների լուծումը: Այդ նպատակով նրանք տնօրինում են որոշակի քանակությամբ ֆինանսական միջոցների:

Հայաստանի ներկայիս վարչատարածքային բաժանման համակարգի պայմաններում ստեղծված է այնպիսի մի իրավիճակ, որ առկա են մեծ թվով փոքր համայնքներ, որոնց տրամադրության տակ գտնվող ֆինանսական միջոցները բավարարում են միայն համայնքի ղեկավարի և 2-3 հոգանոց աշխատակազմի պահպանելուն: Այս պարագայում ավելորդ է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների, առավել ևս միջոցների արդյունավետ կառավարման մասին խոսելը:

Համայնքների խոշորացման արդյունքում առաջանում են որոշակի տնտեսական օգուտներ, որոնք կարելի է ուղղել հանրային ծառայությունների մատուցմանը: Սակայն բնակչությանը մատուցվող ծառայությունների քանակն ու որակը ուղղակիորեն պայմանավորված է ոչ միայն միջոցների առկայությունով, այլ նաև այն հանգամանքով, թե որքանով են արդյունավետ կառավարվում և օգտագործվում այդ միջոցները:

Այս առումով, համայնքների խոշորացումից հետո, երբ առաջանում են ազատ միջոցներ, առաջնային նշանակություն է ստանում այդ միջոցների արդյունավետ կառավարումը, մասնավորապես, բյուջետավարման առաջավոր մեթոդների կիրառումը: Որպես այդպիսին հանդիսանում է ըստ աշխատանքների կատարման բյուջետավարումը:

Ըստ աշխատանքների կատարման բյուջետավարումը հնարավորություն է տալիս ապահովել կապը ներդրված ռեսուրսների և ստացված արդյունքների միջև, ապահովում է բյուջետային ծրագրի քայլերի և գործողությունների կատարման թափանցիկություն, ապահովում է արդյունավետ հանրային մասնակցայնություն և մեծացնում վերահսկման հնարավորություններ համայնքի յուրաքանչյուր բնակչի կողմից և այլն:

Սույն աշխատությունն իրենից ներկայացնում է Շատին համայնքի բյուջեն՝ կազմված ըստ աշխատանքների կատարման ձևաչափով: Համայնքի բյուջեն կազմելիս ենթադրվել է, որ Շատինն իրենից ներկայացնում է 12 համայնքների խոշորացման արդյունքում ձևավորված համայնք: Համայնքի իրավիճակի վերլուծության նպատակով դիտարկվել են 12 համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակների նկարագիրը: Նյութում տեղ գտած բոլոր գնահատականներն և կանխատեսումները իրականացվել են փորձագիտական կարծիքի հիման վրա և ունեն խիստ պայմանական բնույթ:

Սույն աշխատության նպատակն է ցույց տալ, թե ինչպես կարելի է կազմել համայնքների խոշորացման արդյունքում նոր ձևավորված համայնքի բյուջե՝ ըստ աշխատանքների կատարման ձևաչափով:

Համայնքի ղեկավարի ուղերձը

Հարգելի բնակիչներ.

Տարիների ընթացքում մեր համայնքում կուտակված հիմնախնդիրների լուծումը տեղափոխվում է նոր հնարավորությունների տիրույթ: Նախ և առաջ բոլորիս ջանքերով ավելանում են բյուջեի եկամուտները: Բացի այդ, համայնքների խոշորացման արդյունքում ձևավորված մեր համայնքը վարչական ծախսերի օպտիմալացման հաշվին ունի տնտեսված միջոցներ, որոնք կարելի է ուղղել մեր համայնքի բնակիչներին նոր ծառայություններ մատուցելուն և մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: Եվ վերջապես, ֆինանսական միջոցների տնօրինման արդյունավետ մեթոդների կիրառումը թույլ է տալիս առավել նպատակային ու առաջանցիկ դարձնել համայնքի զարգացման ընթացքը:

Առաջարկվող բյուջեն իր հիմքում պարունակում է համայնքի ֆինանսական կառավարման հաշվետվողականության և չափելիության, հրապարակայնության և թափանցիկության, ինչպես նաև ծախսերի արդյունավետության և նպատակայնության բարձրացման սկզբունքներ:

Ըստ աշխատանքների կատարման բյուջեն հանդիսանում է նաև յուրօրինակ գործիք համայնքի բյուջեն ֆինանսավորման նոր աղբյուրներով համալրելու համար:

2011 թ. համայնքային բյուջեն կազմելու ժամանակ համայնքն առաջնորդվել է իր առջև դրված ռազմավարական նպատակներով և դրանց հասնելու համար անհրաժեշտ քայլերով:

Դիմում եմ համայնքի ավագանուն, գյուղապետարանի աշխատակիցներին և համայնքի բոլոր բնակիչներին, որպեսզի շահագրգիռ մոտեցում ցուցաբերվի համայնքի 2011թ. բյուջեի գոյացման, դրա օգտագործման ուղղությունների ճիշտ ընտրության և բյուջեի կատարման գործունե մեխանիզմների ապահովման հարցերին: Համոզված եմ նաև, որ ձեր բոլորի աջակցությամբ տարին ամփոփելիս կունենանք արդյունավետ տնօրինված բյուջե և լուծում ստացած բազում համայնքային խնդիրներ:

Գյուղապետ՝

Համայնքի առաքելությունը

Շատին համայնքի առաքելությունը իր լիազորությունների շրջանակներում համայնքի զարգացման արդյունավետ կառավարումն է ի շահ յուրաքանչյուրի և բոլորի:

Համայնքի ռազմավարական նպատակն ու խնդիրները

Շատին համայնքի ռազմավարական նպատակն է իր լիազորությունների շրջանակներում հետևողականորեն բարեփոխումներ անց կացնելու ճանապարհով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել մաքուր, բարեկեցիկ և մրցունակ ներդրումների համար:

Համայնքի ռազմավարական խնդիրներն են.

- *Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ իրականացնելով տեղական տուրքերի ու վճարների սահմանման և զանձման ծկուն քաղաքականություն*
- *Բարձրացնել եկամուտների հավաքագրման մակարդակը*
- *Սերտորեն համագործակցել հանրապետական և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ*
- *Ընդլայնել համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների ցանկը*
- *Բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը*

Համայնքի տեսլականը


Շատին համայնքը հարուստ և բարեկարգ համայնք է՝ զարգացած գյուղատնտեսությամբ, վերամշակող արտադրություններով, լուսավոր փողոցներով և ակտիվ հոգևոր-մշակութային կյանքով, որտեղ բնակչությունը վայելում է անհոգ, բարեկեցիկ և ստեղծագործ կյանքի բերկրանքը:

Համայնքի իրավիճակի վերլուծություն

1. Ընդհանուր տվյալներ

Շատին համայնքը բաղկացած է 16 բնակավայրերից՝ Շատին, Աղնջաձոր, Արտաբույնք, Գողթանիկ, Եղեգիս, Թառաթունք, Հերմոն, Արատես, Կալասար, Հորբատեղ, Հորս, Սալլի, Վարդահովիտ, Գետիկվանք, Սևաժայռ և Քարագլուխ:

Համայնքի կազմի մեջ մտնում են 12 վարչական միավորներ: Դրանք են՝ Շատին, Աղնջաձոր, Արտաբույնք, Գողթանիկ, Եղեգիս, Թառաթունք, Հերմոն, Հորբատեղ, Հորս, Սալլի, Վարդահովիտ, Քարագլուխ վարչական միավորները¹:



Համայնքն ունի 27 697 հատարածք: Համայնքի կենտրոնն է Շատին բնակավայրը: Համայնքի կենտրոնի հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 134 կմ, իսկ մարզկենտրոնից՝ 12 կմ:

2. Պատմական ակնարկ

Շատին համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերը հիմնականում վերաբնակեցվել են 1800-ականներից հետո, տարբեր տեղերից ներգաղթածներով: Սակայն պատմական աղբյուրները վկայում են, որ համայնքի կազմի մեջ մտնող գյուղերը որպես բնակավայրեր բավականին հին են, հիշատակվում են որպես հինգերորդ, իններորդ և այլ դարերի բնակավայրեր:

Շատին գյուղը վերաբնակեցվել է 1828 թ. Պարսկաստանի Սալմաստ գավառից ներգաղթածներով: Սակայն գյուղի տարածքում գտնվող պատմական հուշարձանները վկայում են, որ գյուղն ավելի հին է: Գյուղի տարածքում գտնվում են Եղեգիս քաղաքի ավերակները, Աղվանք եկեղեցին, Բագիլիկ եկեղեցին, Շատիվանքի եկեղեցական համալիրը:

Գողթանիկ գյուղը վերաբնակեցվել է 1988 թվականին Ադրբեջանից գաղթած փախստական ընտանիքներով: Սակայն գյուղի հյուսիսային կողմում գտնվող եկեղեցին, գերեզմանոցը վկայում է, որ այստեղ բնակավայր է եղել 9-րդ դարից:

Աղնջաձորը պատմության մեջ հիշատակվում է 4-5-րդ դարերից: Համայնքի նշանավոր կոթողներից է Սելիմի քարավանատունը: Այն կառուցվել է Օրբեյան Չեսար իշխանը: Այստեղ է գտնվում նաև Սուլեմա բերդը, ևս մեկ քարավանատուն, պատմական այլ հուշարձաններ:

Եղեգիսը կամ Եղեգիքը Վայոց Ձորի հնագույն բնակավայրերից է: 9-րդ դարի 1-ին քառորդում այն եղել է Սյունիքի Վասակյան տոհմի Գահեռեց իշխանների նստավայրը: Օրբեյանները, տեր դառնալով Վայոց Ձորին, Եղեգիսը դարձրել են իրենց իշխանության կենտրոնը: Գյուղի տարածքում են գտնվում Սուրբ Աստվածածին և Ձորաց եկեղեցիները:

¹ Այս վարչական միավորները մինչև համայնքների խոշորացումը եղել են առանձին համայնքներ

Հորսը կամ Հորքը հիշատակվում է 10-րդ դարից: Գյուղը վերաբնակեցվել է 1918թ. Նախիջևանի Մեծոպ գյուղից գաղթածներով: Այստեղ է գտնվում «Չեսարի դարպասը» և եկեղեցիական համալիրը:

Սալլին գոյություն է ունեցել շատ հնուց: Այդ մասին կա հիշատակություն Ստեփան Օրբելյանի «Պատմություն Սիսական» գրքում, որտեղ հիշատակվում է, որ Գրիգոր Լուսավորիչի հանձնարարությամբ քարոզիչներ են ուղարկվում Հայաստանի տարբեր վայրեր, որոնք իրենց հետ վերցնում են տարբեր մասունքներ ու քարոզում են քրիստոնեություն: Հիշատակվում է, որ նրանք իջևանում են Սալլի գյուղի տարածքում և այդ սրբերից մեկի՝ Սուրբ Մանասի մասունքները հանգրվանում են գյուղում, և կառուցվում է փոքր մատուռ: Այդ մատուռը ներկայումս ունի վերանորոգման կարիք:

Քարագլուխն ըստ պատմական աղբյուրների հին Խարաշկոնք գյուղն է, որը հիշատակվում է 4-րդ դարում: Քարագլուխը վերաբնակեցվել է 1820թ.: Գյուղի տարածքում կան բազմաթիվ խաչքարեր և եկեղեցի:

Թառաթումբը հիմնադրվել է 1828թ.: Գյուղի եկեղեցին կառուցվել է 1896թ., սակայն պատմական հուշարձանները վկայում են, որ գյուղը ավելի հին պատմություն ունի: Գյուղից հարավ տարածվում է հին գյուղատեղին: Այգիների մեջ ընկած են 2 կոթողածև մեծ խաչքարեր, որոնք բնորոշ են 10-րդ դարին:

Արտաբույնքը կամ պատմական Արտաբուն հիշատակվում է հնագույն ժամանակներից: 5-րդ դարի Վարդանանց պատերազմի վերջին ընդհարումը հիշատակվում է Արտաբույնք գյուղի մոտ: Գյուղի տարածքում է 13-րդ դարի կառույցներ՝ Սմբաբերդը և Ցախաց Քար եկեղեցին: Գյուղը վերաբնակեցվել է 1828թ.:

Վարդահովիտը հիշատակվում է հնագույն ժամանակներից: Ենթադրվում է, որ այն 13-րդ դարում հիշվող Երկայնարտի գյուղն է: Գյուղում պահպանվել է 2 մեծ խաչքար, տարբեր մոտիվներով մշակված, շքեղ քանդակներով: Խաչքարերից մեկի արձանագրությունը թվագրված է (1291թ.): 1988թ. գյուղում բնակվում է Ադրբեջանից փախստականներ և հանրապետությունի տարբեր վայրերից եկած երիտասարդ ընտանիքներ:

Հորբատեղի հիմնադրման ժամանակը հայտնի չէ: Հուշարձանի բեկորները վերաբերվում են 10-12-րդ դարին: Գյուղամեջի եկեղեցին 17-րդ դարի կառույց է: Գյուղը վերաբնակեցվել է 1828թ. Պարսկաստանի Խոց և Սալմաստ գավառներից գաղթած ընտանիքներով:

Հերմոնը վերաբնակեցվել է 1988թ.: Բնակիչները հիմնականում Ադրբեջանից գաղթած նախկին փախստականներ են: Գյուղի պատմական արխիվներում հիշատակվում է դեռևս 7-րդ դարից: Գյուղի տարածքում են գտնվում 13-րդ դարում կառուցված Հերմոնի և Արատեսի վանքերը: Այստեղ է գործել Հերմոնի նշանավոր վարժարանը, որը ծաղկում է ապրել 14-15 դարում:

3. Ֆիզիկա-աշխարհագրական պայմաններ

Շատին համայնքի տարածքի բարձրությունը ծովի մակերևույթից տատանվում է 1300-ից մինչև 3300 մետրի սահմաններում՝ ըստ համայնքի կազմի մեջմտնող տարբեր բնակավայրերի: Համայնքի կենտրոնը՝ Շատին գյուղը գտնվում է 1320 մետր բարձրության վրա: Համայնքի կլիման չորային է՝ ցուրտ ձմեռներով և զով ամառներով: Հաճախակի են երաշտ տարիները, որոնք մեծ վնաս են հասցնում թե անասնապահությանը և թե գյուղատնտեսությանը: Տարեկան տեղումների քանակը կանգում է 300-350 մմ:

Համայնքի տարածքով են անցնում Եղեգիս գետը: Գետի ձախ ափի գոտին քարաթափման մեծ վտանգ ունի: Այստեղից բնակչությունը պետք է տարհանվի ավելի

անվտանգ վայրեր: Գարնանային հեղեղումների ժամանակ գետը հաճախ դուրս է գալիս ափերից՝ ողողելով մերձակա տարածքները:

4. Ժողովրդագրություն

Համայնքի բնակչության ընդհանուր թիվը կազմում է 7196 մարդ, որոնցից 3469-ը տղամարդիկ են, իսկ 3727-ը՝ կանայք (տես աղյուսակ 1): Համայնքի բնակչության գրեթե կեսը միջին տարիքի բնակչությունն է (18-60 տարեկան): Համայնքի բնակչության շուրջ 20 %-ը թոշակառուներ են: Բնակչության մեծ մասը զբաղված են գյուղատնտեսության ոլորտում: Համայնքում հաշվվում են 2514 տնային տնտեսություններ:

Համայնքի բնակչության 30 %-ը բնակվում է համայնքի կենտրոնում: Համեմատաբար մեծ թվով բնակչություն ունեն Արտաբույնք, Եղեգիս, Թառաթունք, Քարագլուխ վարչական միավորները: Իսկ մնացյալ բնակավայրերում բնակչության թիվը չի հասնում նույնիսկ 400-ի:

Համայնքի բնակչության շրջանում անգրագետներ չկան: Բնակչության հիմնական մասն ունեն տասնամյա կրթություն: Իսկ 520 հոգի ունեն բարձրագույն կրթություն (տես աղյուսակ 2):

Աղյուսակ 1. Շատին համայնքի ժողովրդագրությունը (2010 թ. հունվարի 1-ի տվյալներով)

ՀՀ	Ցուցանիշ	Չափման միավոր	Ընդամենը համայնքում	Ըստ համայնքի կազմի մեջ մտնող վարչական միավորների											
				Շատին	Ալմշածոր	Արտաբույնք	Գրյունիս	Երեգիս	Թառաթունք	Հերմոն	Հյուսիստեղ	Հյսլ	Սալլի	Վարդապետիս	Քարապետիս
1.	Տնային տնտեսություններ	ծուխ	2514	720	142	456	123	175	167	101	84	108	74	134	230
1.	Բնակչության թվաքանակ	մարդ	7196	2108	391	1179	210	568	554	235	271	313	246	266	855
•	Տղամարդիկ	մարդ	3469	956	193	601	99	295	279	100	138	149	116	131	412
•	Կանայք	մարդ	3727	1152	198	578	111	273	275	135	133	164	130	135	443
•	Նախադպրոցական տարիքի երեխաներ (0-6 տ.)	մարդ	535	181	31	98	13	39	33	28	20	14	18	14	46
•	Դպրոցական տարիքի երեխաներ (7-17 տ.)	մարդ	1457	438	57	274	30	111	142	42	63	51	49	58	142
•	Միջին տարիքի բնակչություն (18-60 տ.)	մարդ	3695	1147	197	495	105	328	301	106	133	167	124	140	452
•	Ավագ տարիքի բնակչություն (60 տ.-ից բարձր)	մարդ	1506	342	106	312	62	87	78	59	55	81	55	54	215
2.	Թոշակառուներ	մարդ	1414	368	98	250	59	79	112	45	65	89	50	21	178
3.	Արտագաղթած բնակչություն	մարդ	152	28	17	12	7	10	9	6	3	3	10	2	45
4.	Աշխատունակ բնակչություն	մարդ	3791	1140	190	596	100	300	300	121	130	150	114	150	500
5.	Գործազուրկներ (զբաղվածության կենտրոնում գրանց ված)	մարդ	21	8	1	5	2	0	1	0	0	0	1	3	0
6.	Զբաղվածներ	մարդ	3760	1132	190	609	100	287	311	121	121	140	114	140	495
•	Գյուղատնտեսության զբաղվածներ	մարդ	3217	992	129	553	61	245	280	105	98	120	97	102	435
•	Արդյունաբերության զբաղվածներ	մարդ	32	0	0	0	0	0	0	14	0	0	0	18	0
•	Սպասարկման զբաղվածներ	մարդ	511	140	61	56	39	42	31	2	23	20	17	20	60
7.	Անապահով ընտանիքների թիվը	ծուխ	568	190	20	105	13	60	28	32	32	15	15	18	40

	(տոցիալական ծառա յուրյունում գրանցված)														
8.	Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսություններ	ծուխ	365	122	11	76	7	44	18	23	21	4	7	7	25
•	«Փարոս» համակարգում ընդգրկված տնային տնտեսություններ	ծուխ	365	122	11	76	7	44	18	23	21	4	7	7	25
9.	Փախստականներ	մարդ	936	18	6	2	156	409	0	211	0	31	15	71	17
10.	Հաշմանդամներ	մարդ	503	126	23	107	7	33	32	21	28	22	20	8	76
11.	Ձոհված ազատամարտիկների ընտանիքներ	ծուխ	9	3	0	0	1	0	0	1	0	1	2	0	1

Աղյուսակ 2. Շատին համայնքի բնակչության կրթական մակարդակը բնութագրող ցուցանիշներ (2010 թ. հունվարի 1-ի տվյալներով)

ԳԳ	Ցուցանիշ	Չափման միավոր	Ընդամենը համայնքում	Ըստ համայնքի կազմի մեջ մտնող վարչական միավորների											
				Շատին	Աղնջամբ	Արտաբույնք	Գողթանիկ	Եղեգիս	Թառաթամբ	Գեղմն	Նորթատեղ	Քոս	Սալիկ	Կարսպահովիս	Քարաբուխ
1.	Անգրագետներ	մարդ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
2.	8 ամյա կրթությամբ	մարդ	583	202	24	61	31	35	35	28	20	45	15	35	52
3.	10 ամյա կրթությամբ	մարդ	3352	1047	172	581	68	315	293	107	64	91	109	113	392
4.	Միջին մասնագիտական կրթությամբ	մարդ	799	160	58	120	38	62	16	18	20	94	27	28	158
5.	Բարձրագույն կրթությամբ	մարդ	520	80	49	45	30	52	35	12	84	18	28	22	65

5. Տեղական ինքնակառավարման մարմիններ

Համայնքի ղեկավարը և ավագանին ընտրվել են ուղղակի ընտրություններով, 4 տարի ժամկետով: Համայնքի ավագանին բաղկացած է 11 անդամից:

Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է աշխատակազմի և համայնքային ենթակայության հիմնարկությունների միջոցով: Համայնքի ղեկավարի աշխատակազմը բաղկացած է 23 հաստիքային միավորից, ներառյալ համայնքի ղեկավարի հաստիքը:

Շատին համայնքի կազմի մեջ մտնող 11 բնակավայրերն ունեն վարչական ներկայացուցիչներ, որոնք հանդիսանում են համայնքի ղեկավարի ներկայացուցիչը տեղերում:

Աղյուսակ 3. Համայնքի ղեկավարի աշխատակազմը

Անվանում	Հաստիքային միավոր	Դրույթաչափ (հազ. դրամ)
Համայնքի ղեկավար	1	216.0
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	114.0
Համայնքի ղեկավարի օգնական	1	120.0
Խորհրդական	1	48.0
Աշխատակազմի քարտուղար	1	120.0
Գլխավոր մասնագետ - ֆինանսիստ	1	114.0
Գլխավոր մասնագետ - գյուղատնտես	1	114.0
Գլխավոր մասնագետ - հաշվապահ	1	84.0
Գլխավոր մասնագետ	1	73.0
Առաջատար մասնագետ	10	46.0
Համակարգչային օպերատոր	1	36.0
Քարտուղար	1	36.0
Հավաքարար	1	36.0
Պահակ	1	36.0
Ընդամենը	23	
Վարչական ներկայացուցիչ	11	50.0
Ընդամենը	34	

Շատինում համայնքի ղեկավարին վերապահված պարտադիր և կամավոր լիազորություններից բացի իրականացվում է նաև պետության կողմից պատվիրակված լիազորություն՝ անսանաբույժի ծառայությունը:

Համայնքների խոշորացման արդյունքում նոր ձևավորված Շատին համայնքում նպատակահարմար է նաև համայնքին հանձնել ևս մեկ պատվիրակված լիազորություն՝ սոցիալական ծառայությունների իրականացումը:

6. Առողջապահություն

Շատին համայնքի կենտրոնում գործում է «Հռիփսիմե» առողջության կենտրոնը: Կենտրոնի գույքային և շենքային պայմանները բավարար են, բուժանձնակազմը վերապատրաստվել է, ունի 2 բժիշկ: Կենտրոնին անհրաժեշտ են նոր սարքավորումներ, գույք, շտապօգնության մեքենա:

Համայնքի կազմի մեջ մտնող բոլոր վարչական միավորներում կան բուժկետեր որոնց մեծ մասն ունեն տարբեր խնդիրներ: Այսպես, կապիտալ կամ մասնակի վերանորոգման կարիք ունեն Արտաբույնք, Գողթանիկ, Եղեգիս, Հերմոն, Հորս վարչական միավորների բուժկետերը:

Հորբատեղի բուժկետը գտնվում է փայտե տնակում, որը տրամադրվել է ՕԲՍՖԱՄ կազմակերպության կողմից տաս տարի առաջ: Քարագլուխի բուժկետի շենքը կառուցվել է վերջերս և լուրջ վերանորոգումների կարիք չունի: Սալլիում բուժկետի շենք չկա: Բուժքույրը, նստում է նախկին վարչական շենքում: Վարդահովիտի բուժկետը վերանորոգվել է միջազգային կազմակերպության կողմից, ունի դեղորայք և շրջանառու ֆոնդ:

Համայնքում գործող բուժկետերի մեծ մասը կարիք ունեն նոր գույքի, սարքավորումների և դեղորայքի:

7. Համայնքի սեփականություն

Շատին համայնքի սեփականությունը ներկայացված է աղյուսակ 4-ում: Վարչական շենքերը հանդիսանում են նախքան համայնքի խոշորացնելը նախկին համայնքների գյուղապետարանների շենքերը:

Աղյուսակ 4. Շատին համայնքի սեփականությունը

Անվանում	Չափ փուշ ման միավոր	Ըստ համայնքի կազմի մեջ մտնող վարչական միավորների											
		Շատին	Աղջաձոր	Արտաբույնք	Գողթանիկ	Եղեգիս	Թառառամբ	Հերմոն	Հորբատեղ	Հորս	Սալլի	Վարդահովիտ	Քարագլուխ
Վարչական շենք	հատ	1	1	1	-	-	1	1	1	-	1	2 ²	1
Մշակույթի տուն	հատ	1	1	1	1	1	-	1	1	1	-	2	1
Գրադարան	հատ	1	1	1	1	1	1	1	1	-	-	1	1
Զրնուղի ցանց	կմ	?	12	13	17	17	12	3	?	18	?	?	?
Ոռոգման ցանց	կմ	?	-	17	3,5	3,5	3	2	?	30	?	?	?
Բուժկետ	հատ	1	1	1	1	1	1	1	1	1	-	1	1
Գերեզմանոց	հատ	-	-	1	-	-	-	-	-	1	-	-	-
Գյուղտեխնիկա, գործիքներ	հատ	-	-	-	1	10	-	-	?	-	12	-	3

² Շենքերից մեկը հատկացված է գյուղի դպրոցին

Զբոսայգի	հատ	-	-	-	-	-	-	-	-	1	-	-	-	-
Կապտաժներ	հատ	-	-	-	-	-	-	-	-	-	10	-	-	-
Կամուրջներ	հատ	-	-	-	-	-	-	-	-	-	4	1	3	3
Հուշարձան	հատ	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	-	-
Պահեստ	հատ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	-
Խմելու ջրի ամբարտակ	հատ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	-

8. Բնություն և շրջակա միջավայրի պահպանություն

Համայնքում բնության պահպանության և շրջակա միջավայրի մաքրության ապահովման համար առաջնահերթ խնդիր է հանդիսանում համայնքում կոյուղու համակարգի անց կացումն ու աղբահանության կազմակերպումը: Համայնքի տարածքով անցնում է Եղեգիս գետը: Անհրաժեշտ է կառուցել հենապատ: Գարնանային վարարումների ժամանակ վնասվում են հարակից ճանապարհները և կամուրջները: Անհրաժեշտ է նաև գետի հունի ուղղում և ամրացում:

Անձրևների ժամանակ մեծ է սողանքների հավանականությունը: Համայնքը հաճախ է տուժում ստորգետնյա ջրերից: Հաճախակի են սելավներն ու փլուզումները: Քարաթափման գոտին մեծ վնաս է հասցնում բնակարաններին և սպառնում մարդկանց կյանքին:

9. Կրթություն, մշակույթ և սպորտ

Շատին համայնքում գործում են 12 հանրակրթական դպրոցներ՝ յուրաքանչյուր վարչական միավորում մեկական դպրոց: Համայնքի դպրոցներում սովորում են 969 աշակերտներ: Աշխատողների ընդհանուր թիվը կազմում է 276 (տես աղյուսակ 5):

Համայնքի դպրոցների մեծ մասում վերջին տարիներին կատարվել են ներդրումներ տարբեր աղբյուրների հաշվին: Այսպես, Շատին, Աղնջաձոր, Թառաթումբ, Հորբատեղ, Քարագլուխ վարչական միավորների դպրոցներում ներդրումներ են կատարվել պետական բյուջեի հաշվին, Հերմոնի դպրոցում՝ ՀԿՀ-ի ՀՀ մասնաճյուղի և Սալլիի դպրոցում՝ ԱՄՆ-ի Հայ կրթական հիմնարկության հաշվին:

Չնայած կատարված ներդրումներին, այնուամենայնիվ, դպրոցներից շատերում դեռ առկա են մի շարք հիմնախնդիրներ.

- Աղնջաձորի դպրոցի գույքը հին է և նոր գույքի ձեռք բերման անհրաժեշտություն է զգացվում
- Արտաբույնքի դպրոցի շենքն ունի վերանորոգման կարիք
- Գողթանիկի դպրոցը երկար տարիներ չի վերանորոգվել և գտնվում է անմխիթար վիճակում, քայքայված վիճակում է դպրոցի խմելու ջրի ցանցը
- Եղեգիսի դպրոցի շենքում ներքին հարդարման աշխատանքների անհրաժեշտություն է զգացվում
- Թառաթումբի դպրոցական գույքը հին է և թարմացման կարիք ունի
- Հերմոնի դպրոցի շենքում ներքին հարդարման աշխատանքների անհրաժեշտություն է զգացվում, անհրաժեշտ է կառուցել նաև խմելու ջրի ցանց և սանհանգույց
- Հորսի դպրոցը վերանորոգման կարիք ունի, խմելու ջրի ջրագծերը ենթակա են փոխելու

- Սալլիի դպրոցը չունի սանահանգույց և կոյուղի, դպրոցական գույքը հին է, չկան լաբորատոր սարքավորումներ
- Վարդահովիտի դպրոցի շենքը հիմնանորոգման կարիք ունի, դպրոցական գույքը հին է և նոր գույքի ձեռք բերման անհրաժեշտություն է զգացվում
- Քարագլուխի դպրոցում անմխիթար վիճակում են դպրոցի սանահանգույցը և խմելու ջրի ցանցը

Հարկ է նշել, որ համայնքի դպրոցներից մեծ մասում մատուցվող ծառայությունները գտնվում են ցածր մակարդակի վրա (չկան նորմալ շենքային պայմաններ, աշակերտների թիվն է խսիտ սահմանափակ, չկա հնարավորություն անհրաժեշտ մանկավարժական անձնակազմ պահելու համար, ինչի արդյունքում նույն մանկավարժը կարող է դասվանադել մի քանի տարբեր առարկաներ և այլն): Օրինակ, եթե Վարդահովիտի գյուղական դպրոցում սովորում է ընդամենը 8 աշակերտ, ապա հեշտությամբ կարելի է պատկերացնել, թե ինչ ասել է այդ դպրոցական երեխայի համար ունենալ դասարան և համադասարանցիներ: Այս առումով նպատակահարմար է համայնքում կրճատել դպրոցների թիվը և ձեռք բերել, օրինակ, տրանսպորտային միջոց, որը հասանելի կդարձնի տվյալ ծառայությունը այն բնակավայրերի բնակիչների համար, որտեղ կրճատվել են դպրոցները, իսկ կրճատման արդյունքում տնտեսված գումարներն ուղղել գործող դպրոցի շենքի վերանորոգմանը, բարձր որակավորում ունեցող մանկավարժական կադրերի ներգրավմանը, գրքային ֆոնդի ստեղծմանը և այլն: Այս ամենը հնարավորություն կտա ապահովել որակյալ կրթություն:

Համայնքում չկան արտադպրոցական կրթություն ապահովող որևէ հիմնարկներ՝ երաժշտական դպրոց, գեղարվեստի դպրոց և այլն: Համայնքի երեխաները զրկված են որևէ խմբակ՝ նկարչության, ձեռագործության և այլն հաճախելու հնարավորությունից:

Համայնքում մարզական կյանքը պասիվ է, սպորտդպրոցների, սպորտհրապարակների բացակայության պատճառով: Բացը որոշակիորեն լրացնում են համայնքի որոշ վարչական շրջանների դպրոցների մարզադահլիճները, սակայն դա բավարար չէ համայնքում սպորտային կյանքն աշխուժացնելու համար: Սալլիում կա ֆուտբոլի հրապարակ, որը վերանորոգման կարիք ունի:

Շատին համայնքի խոշորացումից հետո վարչական միավորների գրադարանների գրքային ֆոնդերը հանձնվել են վարչական միավորների դպրոցներին: Սակայն գրքային ֆոնդերը հին են, մաշված և թարմացման կարիք ունեն:

Համայնքում գործում է ընդամենը մեկ մանկապարտեզ Եղեգիս վարչական կենտրոնում: Մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը կազմում է 15, իսկ աշխատողների թիվը՝ 5 (տես աղյուսակ 5): Եթե հիշենք, որ համայնքում նախադպրոցական տարիքի երեխաների թիվը կազմում է 535, ապա պարզ է դառնում, որ գործող մանկապարտեզի կողմից չի մատուցվում ոլորտում անհրաժեշտ ծավալի ծառայություններ:

Համայնքում նախադպրոցական դաստիարակության ոլորտում լիարժեք ծավալով և որակով ծառայությունների մատուցման համար նպատակահարմար է կառուցել մեկ նոր մանկապարտեզ համայնքի կենտրոնում, որտեղ կկարողանան հաճախել համայնքի կենտրոնին համեմատաբար մոտիկ գտնվող Աղնջաձոր, Թառաթումբ, Քարագլուխ, Սալլի, Հորս, Արտաբույնք և Հորբատեղ բնակավայրերի երեխաները: Մյուս կողմից անհրաժեշտ է հզրացնել Եղեգիսի մանկապարտեզը, որտեղ մատուցվող ծառայություններից կկարողանան օգտվել Հերմոն, Գողթանիկ և Վարդահովիտ վարչական միավորների երեխաները:

Համայնքի բոլոր վարչական կենտրոններում կան մշակույթի տներ, որտեղ աշխատում են ընդհանուր թվով 20 հոգի (տես աղյուսակ 5): Սակայն համայնքի բոլոր մշակույթի տան շենքերը գտնվում է վատ վիճակում, մեծ մասը վթարային շենքեր են: Նման պայմաններում շատ դժվար, իսկ որոշ դեպքերում նույնիսկ անհնար է կազմակերպել մշակութային միջոցառումներ և ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը:

Աղյուսակ 5. Շատին համայնքի կրթական և մշակութային հիմնարկները

ԶԶ	Վարչական միավոր	Մանկապարտեզ			Դպրոց			Մշակույթի տուն		
		Քանոց	Երեխաներ միջև վերջումներ	Սալոններ միջև վերջումներ	Քանոց	Սալոններ միջև վերջումներ	Սալոններ միջև վերջումներ	Քանոց	Սալոններ միջև վերջումներ	Սալոններ միջև վերջումներ
1	Շատին	-	-	-	1	266	45	1	100	3
2	Աղնջաձոր	-	-	-	1	56	20	1	20	1
3	Արտաբույնք	-	-	-	1	164	31	1	100	4
4	Գողթանիկ	-	-	-	1	21	10	1	20	1
5	Եղեգիս	1	15	5	1	84	30	1	20	1
6	Թառաթումբ	-	-	-	1	84	23	1	80	2
7	Յերմոն	-	-	-	1	37	16	1	20	1
8	Հորբատեղ	-	-	-	1	46	17	1	20	2
9	Հորս	-	-	-	1	42	30	1	25	1
10	Սալլի	-	-	-	1	33	17	1	20	1
11	Վարդահովիտ	-	-	-	1	8	10	1	50	2
12	Քարագլուխ	-	-	-	1	128	27	1	20	1
	<i>Ընդամենը</i>	<i>1</i>	<i>15</i>	<i>5</i>	<i>12</i>	<i>969</i>	<i>276</i>	<i>12</i>	<i>495</i>	<i>20</i>

10. Բնակարանային տնտեսություն

Համայնքում կան 2050 բնակելի տներ: Բնակֆոնդի ընդհանուր մակերեսը 234 969 քմ է (տես աղյուսակ 6): Համայնքի բնակելի տների կազմում բավականին շատ են վթարային և կիսավթարային տները: Տների 14 %-ը համարվում են վթարային: Անհրաժեշտություն է զգացվում լուծել վթարային տների հարցը՝ տեղափոխելով կամ հիմնանորոգելով վերջիններս:

Աղյուսակ 6. Շատին համայնքի բնակարանային տնտեսության վերաբերյալ տվյալներ

ԶԶ	Վարչական միավոր	Բնակելի տների թիվը	Վթարային տների թիվը	Բնակֆոնդի ընդհանուր մակերեսը
1	Շատին	480	60	70000 քմ
2	Աղնջաձոր	125	10	12250 քմ
3	Արտաբույնք	388	23	42680 քմ
4	Գողթանիկ	123	39	13800 քմ
5	Եղեգիս	160	40	12800 քմ
6	Թառաթումբ	118	13	16854 քմ
7	Յերմոն	97	18	16820 քմ
8	Հորբատեղ	60	20	3800 քմ
9	Հորս	92	12	9520 քմ
10	Սալլի	65	10	6500 քմ

11	Վարդահովիտ	124	20	12445 քմ
12	Քարագլուխ	218	13	17500 քմ
	<i>Ընդամենը</i>	<i>2050</i>	<i>278</i>	<i>234969 քմ</i>

Համայնքում շատ են նաև բնակարանի կարիք ունեցող ընտանիքները, որոնցից հիմնականը երիտասարդ ընտանիքներ են, որոնք փարձում են օջախ ստեղծելու հնարավորություններ գտնել համայնքից դուրս, այդ թվում՝ արտերկրում: Այս առումով արդիական է համայնքում բնակարանաշինության խթանումը և երիտասարդ ընտանիքներին այդ հարցում աջակցելը, որը կարող է դրսևորվել, օրինակ, տնամերձ հողամասեր տրամադրելով: Համայնքի որոշ բնակավայրերում՝ Շատին, Արտաբույնք, առկա են քարաթափման գոտիներ, որտեղից անհրաժեշտ է արտահանել բնակչությանը:

Համայնքում փողոցային լուսավորություն չի իրականացվում: Համայնքում կյանքն աշխուժացնելու և միջբնակավայրային կապն ակտիվացնելու համար կարող է լուսավորել ոչ միայն համայնքի կենտրոնն ու բնակավայրերը, այլ նաև համայնքի բնակավայրերը միմյան կապող ճանապարհները:

11. Աղբահանություն

Համայնքում աղբահանության և սանմաքրման ենթակա տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 56 հա: Աղբահանության տարեկան ծավալը 270 տոննա է, որից տնային տնտեսություններից աղբահանության տարեկան ծավալը կազմում է 242 տոննա (տես աղյուսակ 7):

Համայնքում աղբահանությունը կատարվում է անհատական եղանակով: Համայնքի կազմի մեջ մտնող գյուղերից մեծ մասում չկան աղբավայրեր, աղբը կուտակվում է այստեղ, այնտեղ, որոշ դեպքերում, օրինակ, Եղեգիս գյուղում երբեմն լցվում է նույնիսկ գետը, դրանով լրջ վնաս հասնելով էկոլոգիային, վատթարացնելով համայնքում սանիտարահիգիենիկ վիճակը:

Քանի որ համայնքում աղբահանության տարեկան ծավալները շատ մեծ չեն, ապա աղբահանության խնդիրը կարելի է լուծել համայնքում մի քանի աղբատեղեր ստեղծելով և ձեռքբերելով համապատասխան տրանսպորտային միջոց, որով հնարավոր կլինի կուտակված աղբը պարբերաբար տեղափոխել:

Աղյուսակ 7. Աղբահանությունը Շատին համայնքում

ՀՀ	Վարչական միավոր	Աղբահանության և սանմաքրման ենթակա տարածքի ընդհանուր մակերեսը	Աղբահանության տարեկան ծավալը	Տնային տնտեսություններից աղբահանության տարեկան ծավալը
1	Շատին	7 հա	30 տոննա	29 տոննա
2	Աղնջաձոր	4 հա	20 տոննա	18 տոննա
3	Արտաբույնք	11 հա	30 տոննա	26 տոննա
4	Գողթանիկ	4 հա	20 տոննա	18 տոննա
5	Եղեգիս	4 հա	20 տոննա	18 տոննա
6	Թառաթունք	5 հա	20 տոննա	18 տոննա

7	Հերմոն	4 հա	20 տոննա	18 տոննա
8	Հորբատեղ	4 հա	20 տոննա	18 տոննա
9	Հորս	5 հա	20 տոննա	18 տոննա
10	Սալլի	3,5 հա	20 տոննա	18 տոննա
11	Վարդահովիտ	3 հա	20 տոննա	18 տոննա
12	Քարագլուխ	5 հա	30 տոննա	25 տոննա
	<i>Ընդամենը</i>	<i>56 հա</i>	<i>270 տոննա</i>	<i>242 տոննա</i>

12. *խմելու ջրի ջրամատակարարում և ջրահեռացում*

Շատին համայնքի կենտրոնում և Արտաբույնք բնակավայրում խմելու ջրի մատակարարումը իրականացվում է կենտրոնացված կարգով, եղեգնաձորի ջրնուղից: Մնացյալ բնակավայրերում ջուրը մատակարարվում է ինքնահոս եղանակով, աղբյուրային ջրերով: Շատին և Արտաբույնք բնակավայրերում խմելու ջրի սակագինը 180 դրամ է մեկ խմ-ի դիմաց: Մնացյալ բնակավայրերում վարձավճար չի գանձվում: Համայնքի բնակավայրերում խմելու ջրի ցանցերը գտնվում են մասշված վիճակում, երբեմն կեղտաջրերը լցվում են ներքին ցանց՝ առաջացնելով վարակիչ հիվանդությունների վտանգ:

Սալլիում խմելու ջրագծը կառուցվել է 1960թ., $d=50$ մմ խողովակաշարով: Այն անցնում է ճահիճների միջով, տարիների ընթացքում ենթարկվել է կոռոզիայի և շարքից դուրս եկել: Վերջին տարիներին ջրագծի մեծ մասը վերակառուցվել է $d=100$ մմ խողովակներով, սակայն 3.1 կմ հատվածը մնացել է: Հարկավոր է խմելու ջրագծի արտաքին ցանցը վերակառուցել: Անմխիթար վիճակում է նաև ներքին ցանցը:

Գողթանիկի խմելու ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1970 թ.: Արդեն մաշված ջրագծերից մեծ է ջրի կորուստները: Համայնքը սնուցող ջրի մագիստրալը ձնհալի և գարնանային հեղեղումների ժամանակ հաճախ է վնասվում: Անմխիթար վիճակում է նաև խմելու ջրի ջրի ներքին ցանցը:

Եղեգիսում հին է խմելու ջրագծի և արտաքին և ներքին ցանցը և վերանորոգման կարիք ունի:

Հերմոնում անհրաժեշտ է վերանորոգել խմելու ջրի մագիստրալ ջրագիծն ու ներքին ցանցը:

Քարագլուխի ջրագիծը կառուցվել է 1988թ.: Հատկապես մաշված են ներքին ցանցի խողովակները: Ջրի կորուստը կազմում է 20-30 %: Անհրաժեշտ է հիմնանորոգել խմելու ջրի ցանցը:

Հորբատեղի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1965 թ.: Քայքայված է ջրամատակարարման ներքին ցանցը և հիմնանորոգման կարիք ունի:

Վարդահովիտի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1969թ.: Ջրագծերը անցնում են լեռնային տարածքով և սելավները մեծ վնաս են հասցնում խողովակաշարին: Անհրաժեշտ է անցկացնել 5 կմ մագիստրալ $d=100$ մմ խողովակաշարով: Խմելու ջրագծի ներքին ցանցը քայքայված է և ջրի կորուստը հասնում է 30 %-ի: Անհրաժեշտ է փոխել ներքին ցանցի ջրագծերը: Ջրամատակարարման հետագա արդյունավետությունը բարձրացնելու համար պետք է վերակառուցել նաև 150 մ³ տարողությամբ ջրամբարը և ցանկապատել այն:

Թառաթումբը սնող խմելու ջրի 7.5 կմ մագիստրալը նոր է կառուցվել, սակայն անմխիթար վիճակում է ներքին ցանցը, որը 50 տարվա վաղեմություն ունի և վերանորոգման կարիք ունի:

Աղնջածորի խմելու ջրի արտաքին ցանցը նոր է կառուցվել, սակայն ներքին ցանցը վթարային վիճակում է: Մաշվածության հետևանքով մեծ է ջրի կորուստը:

Շատինի խմելու ջրի ներհամայնքային ցանցը մաշված է, մեծ են ջրի կորուստները:

Արտաբույնքի ջրագծի ներքին ցանցը քայքայված է, ջրի կորուստը կազմում է 35 %:

Հորսի խմելու ջրի ներհամայնքային ցանցը մաշված է, տեղ-տեղ քայքայված, ջրի կորուստը կազմում է 30 %:

Աղյուսակ 8. Շատին համայնքում խմելու ջրի մատարակարարումը

Անվանում	Ըստ համայնքի կազմի մեջ մտնող վարչական միավորների											
	Շատին	Աղնջածոր	Արտաբույնք	Գողթակ	Եղեգի	Թառաթումբ	Հերմոն	Նյութակ	Հոս	Սալի	Կարսակալիս	Քալաթ
Անհատական ծորակ ունեցող տնային տնտեսությունների թիվը	480	125	388	78	160	118	97	60	92	65	124	218
Օրվա ընթացքում մատակարարման ժամերի քանակը	24	24	16	24	24	24	24	24	24	24	24	24
Խմելու ջրի մագիստրալ ջրագծի ընդհանուր երկարությունը	7	4	5	20	4	7,5	7	5	12	5	5	5
Խմելու ջրի ցանցի ընդհանուր երկարությունը	6	12	6	5,5	8	5	4,2	7	18	12	12	9

13. Կոյուղի

Համայնքի ոչ մի բնակավայրում կոյուղի չկա, ինչն էլ ավելի է դժվարացնում համայնքի բնակիչների առանց այն էլ հոգսաշատ կայնքը: Անհրաժեշտ է համայնքում կառուցել կոյուղի և բնապահպանական խնդիրներից խուսափելու համար նաև կեղտաջրերի մաքրման կայան:

14. Գյուղատնտեսություն

Շատին համայնքի գյուղատնտեսական հիմնական ուղղվածությունն են անասնապահությունը, դաշտային մշակաբույսերի աճեցումն ու այգեգործությունն: Ոռոգման ջրի սակավության պատճառով համայնքը դժվարությամբ է կազմակերպում գյուղմթերքների արտադրությունը, արդյունքները շատ հաճախ պայմանավորված են լինում բնության քնահաճույքներով:

Համայնքի բնակչության մեծ մասի զբաղմունքը անասնապահությունն է: Արտադրվում է կաթ, միս, բուրդ, ձու, մեղր: Երաշտ տարիների անասնակերի անբավարար լինելու պատճառով դժվարանում է անասունների մտուրային շրջանի կազմակերպումը:

Անասնապահության զարգացման տեսանկյունից կարևոր է համայնքում անասնաբուժական ծառայությունների բարելավումն ու պրոֆիլակտիկ պատվաստումների պարտադիր կատարումը: Բացի այդ, կարևոր է նաև անասնացեղատեսակների բարելավումը արհեստական խաչասերումների միջոցով: Համայնքում չկան արտադրված կաթը մթերող և վերամշակող կազմակերպություններ:

Համայնքում հիմնականում մշակվում են ցորեն, գարի, առվույտ, կարտոֆիլ, կաղամբ, լոբի: Հողերն ունեն ցածր որակ: Անհրաժեշտ է իրականացնել հողերի փխրեցման աշխատանքներ: Ոռոգման ջուրը հաճախ չի բավարարում և երաշտի տարիներին գյուղացիները կորցնում են բերքի կեսից ավելին: Համայնքում կան պտղատու ծառեր, ընկուզենիներ: Անհրաժեշտ է նոր իրացված տարածքներում հիմնել ծիրանի, դեղձի, խնձորի, խաղողի այգիներ: Համայնքում կան դժվարություններ բերքի սպառման հետ կապված:

Համայնքում կարիք է զգացվում գյուղտեխնիկայի: Պարարտանյութերն և սերմացուները շատ դեպքերում անմատչելի են համայնքի բնակչությանը, այդ առումով կարևոր է դրանք մատչելի գներով ձեռք բերելու և մատչելի պայմաններով վարկեր ներգրավելու հնարավորությունների ստեղծումը:

Համայնքի համար հեռանկարային կարող են համարվել պտղի վերամշակման և պահածոյացման փոքր արտադրամասի հիմնումը, մանր եղջերավոր անասնապահության զարգացումը, բրդի վերամշակման արտադրության կազմակերպումը, կաթի մթերման կայանի հիմնումը, մեղվաբուծության, թռչնաբուծության, խոզաբուծության զարգացումը, ծխախոտագործությունը, դեղաբույսերի (ուրդ, մասուր, անթառան, երիցուկ) վերամշակման և փաթեթավորման արտադրամասի ստեղծումը:

Համայնքում ոռոգման հիմնական աղբյուրը գետի ջրերն են: Ոռոգման համակարգը գտնվում է անմխիթար վիճակում և շատ են ջրի կորուստները: Համայնքի կազմի մեջ մտնող վարչական միավորներում ոռոգման վիճակը ներկայացված է ստորև:

Հերոնում ոռոգման ջրագծերի ընդհանուր երկարությունը 14 կմ է: Ոռոգման մայր առուն բաց է և վարարումների ժամանակ հողեպատոնեշը քանդվում է: Քայքայված է նաև ոռոգման ներհամայնքային ցանցը:

Քարազլուխում ոռոգման ջրագծերի ընդհանուր երկարությունը 7 կմ: Բնակավայրում ոռոգման հիմնական աղբյուրներն են գետն ու ջրամբարը: Անհրաժեշտ է մեծացնել ջրամբարի տարողությունը ու վերանորոգել ոռոգման ցանցը:

Հորբատեղում ոռոգման ջրագծերի ընդհանուր երկարությունը 20 կմ է: Ոռոգման ջրագծերը մաշված են, առուները հաճախ լցվում են հողով, քարով ու դժվարացնում ջրամատակարարումը:

Վարդահովիտում ոռոգման ջրագծերի ընդհանուր երկարությունը 10 կմ է: Գյուղ մտնող մայր առուները բաց են և հաճախ լցվում են տիղնով, քանդվում են: Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է 2500 մ. երկարությամբ հողային հունով մայր առուները փոխել կիսախողովակներով: Անհրաժեշտ է նորոգել նաև ոռոգման ջրագծերը:

Թառաթումբի ոռոգման ջրագծերի ընդհանուր երկարությունը 3 կմ է: Ոռոգման ներքին ցանցը քայքայված է, մեծ է ջրի կորուստը:

Աղնջաձորի ոռոգման ջրագծերի ընդհանուր երկարությունը 6 կմ է: Ոռոգման ջրատարը ունի հողային հուն, հետևաբար կան ջրի մեծ կորուստներ՝ շուրջ 50-60%: Այդ պատճառով ոռոգման սեզոնին առաջանում են լուրջ խնդիրներ: Ջրատարի կառուցումը հնարավորություն կտա նոր տնկարկներ հիմնելու և 20 հա խնձորենիները փրկելու չորացումից: Գյուղը ունի նաև կիսակառույց ջրատար, որի կառուցումից ըստ մոտավոր տվյալների համայնքը կունենա 25-30 մլն դրամի եկամուտ: Գյուղի «Ռեր» կոչվող տարածքը 20 հա ինքնահոս ոռոգման ջրով հնարավոր չէ ապահովել և խնդիր է առաջացել այն ոռոգելի դարձնել մեխանիկական եղանակով: Տարածքը հարմար է ծիրանի, դեղձի և խաղողի այգիների հիմնադրման համար: Անհրաժեշտ է տեղադրել պոմպակայան:

Շատինի ոռոգման ջրագծերի ընդհանուր երկարությունը 40 կմ է: Ոռոգման ներքին ցանցը քայքայված է, մեծ են ջրի կորուստները: Հեղեղումների ժամանակ քանդվում են մայր առուները, որը դժվարություններ է ստեղծում բնակչության համար:

Արտաբույնքի ոռոգման ջրագծերի ընդհանուր երկարությունը 13 կմ է: Գյուղի ոռոգման ջրամբարը գտնվում է 5 կմ հեռավորության վրա, կառուցվել է 1930թ., կարիք ունի հիմնանորոգման: Ոռոգման ջուրը բավարարում է 60%-ով: Ապրիլ-մայիս ամիսներին անձրևներից ու ձնհալից գոյացած ջրերից մայր առուները հաճախ են լցվում տիղմով, որի պատճառով դրանք վնասվում են և մեծանում է ջրի կորուստները: Անհրաժեշտ է ոռոգման մայր առուն անցկացնել մոտավորապես 3000 մ կիսախողովակներով:

Հորսի ոռոգման ջրագծերի ընդհանուր երկարությունը 30 կմ է: Գյուղի ոռոգման ջրամբարը գտնվում է գյուղից 5 կմ վերև: Կառուցվել է 1985թ. և ունի 810 հազ. խմ տարողություն: Սակայն, գտնվելով վթարային վիճակում և չունենալով արտաքին ցանց, կուտակվում է մասնակի չափով մոտ 200 հազ. խմ, որը չի բավարարում գյուղին, քանի որ տնտեսությունները աճել են: Անհրաժեշտ է գարնանը ձնհալից և անձրևներից գոյացած ջուրը ամբարել, որի համար պետք է ջրամբարը մեծացվի և կառուցվի արատաքին սնուցման ցանց: Այն կապահովի ջրամբարից ներքև գտնվող հողերի ոռոգումը և գյուղատնտեսության զարգացումը:

Սալլիում ոռոգման ջրագծերի ընդհանուր երկարությունը 5 կմ է: Ոռոգման համակարգը լուրջ վերանորոգման կարիք ունի: Ոռոգման ջուրը քիչ է և հաճախ չի բավականանցնում համայնքին:

Եղեգիսի ոռոգման ջրագծերի ընդհանուր երկարությունը 6 կմ է: Ոռոգման ներքին ցանցը քայքայված է և վերանորոգման կարիք ունի:

Գողթանիկի ոռոգման ջրագծերի ընդհանուր երկարությունը 3.5 կմ է: Ոռոգման համակարգի խողովակաշարերը մաշված են, մեծ են ջրի կորուստները

15. Արդյունաբերություն

Շատին համայնքում արդյունաբերությունը թույլ է զարգացած: Համայնքի ընդամենը 2 բնակավայրերում գործում են ՀԷԿ-եր: Այսպես, Վարդահովիտում գործում են 2 ՀԷԿ-եր, որտեղ աշխատում են 18 հոգի, նախատեսվում է կառուցել նաև 3 ՀԷԿ-եր, որտեղ նախատեսվում է 24 աշխատատեղ: Հերմոնի տարածքում կան 3 ՀԷԿ-եր, որոնցից 1-ը չի գործում:

Սալլիում կա 1 պանրագործարան, սակայն այն լրիվ հզորությամբ չի աշխատում կաթի սակավության պատճառով:

16. Ճանապարհային տնտեսություն

Շատին համայնքի տարածքի արևմտյան մասով է անցնում հանրապետական նշանակության Սելիմի ճանապարհը: Ճանապարհի վրա են գտնվում Աղնջաձոր, Քարագլուխ, Սալլի, Շատին վարչական միավորները: Ճանապարհին համեմատաբար մոտ են գտնվում նաև Հորս, Թառաթումբ, Եղեգիս և Արտաբույնք վարչական միավորները:

Շատին համայնքի վարչական միավորների ներքին ճանապարհների վիճակն ընդհանուր առմամբ հեռու է բավարար լինելուց. դրանք բոլորը հողայի են, գտնվում են անմխիթար վիճակում, ձմեռային անցանելիությունը սահմանափակ է: Համեմատաբար լավ կամ բարվոք վիճակում են գտնվում համայնքի վարչական միավորները միմյանց կապող ճանապարհները: Վերջիններս ձմռանը անցանելի են: Անմխիթար վիճակում են գտնվում

Հորբատեղ և Վարդահովիտ վարչական միավորները հարևաններին կապող ճանապարհները, որոնց ձմեռային անցանելիությունը սահմանափակ է:

Ներդիր 1.

Նախքան համայնքների խոշորացումը, երբ Շատին համայնքի կազմի մեջ մտնող վարչական միավորները հանդես էին գալիս որպես առանձին համայնքներ, այդ ժամանակ համայնքները միմյանց կապող միջհամայնքային ճանապարհները (ներկայիս վարչական միավորները միմյանց կապող ներհամայնքային ճանապարհները) հանդիսանում էին մարզային ենթակայության ճանապարհներ: Դա նշանակում է, որ այդ ճանապարհների սպասարկումը (մաքրում, ասֆալտապատում և այլն) իրականացվում էր մարզի (պետական բյուջեի) միջոցների հաշվին: Համայնքների խոշորացումից հետո այդ ճանապարհները դարձել են համայնքային նշանակության և հետևաբար դրանց սպասարկումն այսուհետ իրականացվում է համայնքի բյուջեի միջոցների հաշվին, ինչը լուրջ ծանրաբեռնվածություն է համայնքի բյուջեի համար: Իսկ պետական բյուջեի համապատասխան միջոցները, փաստորեն այլևս չեն օգտագործվում այդ նպատակով: Բոլորին հայտնի է, որ ճանապարհների սպասարկումը բավականին թանկ հաճույք է: Ասվածը նշանակում է, որ անհրաժեշտ է մտածել և կիրառել պետական բյուջեից համայնքների բյուջե միջոցների բաշխման այնպիսի մեխանիզմ, որը կապահովի նաև այդ միջոցների փոխանցումը համայնքներին (օրինակ, այդ ճանապարհների սպասարկման լիազորությունը դիտարկել որպես պատվիրակված լիազորություն, կամ համայնքներին տրամադրել այդ աշխատանքների կատարման համար նպատակային դրամաշնորհներ):

Համայնքի բնակչությանը մատուցվող շատ համայնքային ծառայությունները մատչելի դրաձնելու տեսնկյունից կարևոր նշանակություն ունի համայնքի վարչական միավորների և համայնքի կենտրոնի հետ կապի հնարավորությունների ապահովումը և առաջին հերթին ճանապարհների առկայությունը: Համայնքի բոլոր վարչական միավորներն ունեն համայնքի կենտրոնին կապող ճանապարհներ, որոնց մեծ մասը, բացառությամբ Հորբատեղ և Վարդահովիտ վարչական միավորների, գտնվում են բարվոք կամ լավ վիճակում և ձմռանը լիովին անցանելի են: Հորբատեղը և Վարդահովիտը համայնքի կենտրոնին կապող ճանապարհների մի մասը գտնվում է անմխիթար վիճակում, ձմեռային անցանելիությունը սահմանափակ է:

Շատին համայնքի կազմի մեջ մտնող վարչական միավորների ճանապարհների նկարագիրը ներկայացված է ստորև:

Համայնքի կենտրոնի՝ Շատինի ներքին ճանապարհների երկարությունը 5,5 կմ է, իսկ միջին լայնությունը՝ 6 կմ: Գանապարհները հողային են, գտնվում են անմխիթար վիճակում, ձմեռային անցանելիությունը սահմանափակ է: 2005 թ. որոշակիորեն վերանորոգվել են Շատին գյուղի ճանապարհների փլված հատվածները՝ ներգրավված միջոցների հաշվին:

Աղնջաձորի ներքին ճանապարհների երկարությունը 3 կմ է, իսկ միջին լայնությունը՝ 6 մետր: Գանապարհները հողային են, գտնվում են անմխիթար վիճակում, քայքայված են, ձմեռային անցանելիությունը սահմանափակ է: Աղնջաձորն ունի հետևյալ հարևան վարչական միավորներին կապող ճանապարհներ. Քարագլուխ՝ 3 կմ, Թառաթունը՝ 1 կմ երկարությամբ: Նշյալ ճանապարհները գտնվում են բավարար և լավ վիճակում և ձմռանը լիովին անցանելի են:

Արտաբույնքի ներքին ճանապարհների երկարությունը 10 կմ է, իսկ միջին լայնությունը՝ 6 մետր: Գանապարհները հողային են, գտնվում են անմխիթար վիճակում, ձմեռային անցանելիությունը սահմանափակ է: Արտաբույնքն ունի հետևյալ հարևան

վարչական միավորներին կապող ճանապարհներ. Յորբատեղ՝ 7 կմ, Եղեգիս 13 կմ, Շատին՝ 12 կմ երկարությամբ: Եղեգիս և Շատին վարչական միավորներին կապող ճանապարհները գտնվում են լավ վիճակում և ձմռանը լիովին անցանելի են, իսկ Յորբատեղին կապող ճանապարհը գտնվում է անմխիթար վիճակում և ձմռանը լիովին անցանելիությունը սահմանափակ է:

Եղեգիսի ներքին ճանապարհների երկարությունը 4,8 կմ է, իսկ միջին լայնությունը՝ 6 մետր: Գնապարհները հողային են, գտնվում են անմխիթար վիճակում, ձմռանը անցանելիությունը սահմանափակ է: Եղեգիս վարչական միավորն ունի հարևան Յերմոն վարչական միավորն կապող 10 կմ երկարությամբ ճանապարհ: Նշյալ ճանապարհը գտնվում է լավ վիճակում և ձմռանը լիովին անցանելի է: 2010 թ. վարչական միավորի ճանապարհների վրա ներդրումներ են կատարվել Հազարամյակի մարտահրավեր-Հայաստան հիմնադրամից կողմից:

Գողթանիկի ներքին ճանապարհների երկարությունը 1,2 կմ է, իսկ միջին լայնությունը՝ 6 մետր: Գնապարհները հողային են, գտնվում են անմխիթար վիճակում, ձմռանը անցանելիությունը սահմանափակ է: Գողթանիկ վարչական միավորը կապված է հարևան Յերմոն վարչական միավորին 4 կմ երկարությամբ ճանապարհով, որի կեսը լավ վիճակում, ասֆալտապատված է: Մյուս կեսը գտնվում է անմխիթար վիճակում, իսկ ձմռանը անցանելիությունը սահմանափակ է:

Յերմոնի ներքին ճանապարհների երկարությունը 3,8 կմ է, իսկ միջին լայնությունը՝ 6 մետր: Գնապարհները հողային են, գտնվում են անմխիթար վիճակում, ձմռանը անցանելիությունը սահմանափակ է: Յերմոնն ունի հետևյալ հարևան վարչական միավորներին կապող ճանապարհներ. Վարդահովիտ՝ 8 կմ, Գողթանիկ 4 կմ երկարությամբ: Վարդահովիտ վարչական միավորին կապող ճանապարհը գտնվում է անմխիթար վիճակում և ձմռանը անցանելիությունը սահմանափակ է: 2010 թ. վարչական միավորի ճանապարհների վրա ներդրումներ են կատարվել Հազարամյակի մարտահրավեր-Հայաստան հիմնադրամից կողմից:

Յորբատեղի ներքին ճանապարհների երկարությունը 7 կմ է, իսկ միջին լայնությունը՝ 6 մետր: Գնապարհները հողային են, գտնվում են անմխիթար վիճակում, ձմռանը անցանելիությունը սահմանափակ է: Յորբատեղ վարչական միավորն ունի հարևան Արտաբույնք վարչական միավորին կապող նորմալ ճանապարհ:

Յորսի ներքին ճանապարհների երկարությունը 2,5 կմ է, իսկ միջին լայնությունը՝ 6 մետր: Գնապարհները հողային են, գտնվում են անմխիթար վիճակում, ձմռանը անցանելիությունը սահմանափակ է: Յորս վարչական միավորն ունի հարևան Սալլի վարչական միավորին կապող 5 կմ երկարությամբ ճանապարհ, որը գտնվում է բարվոք վիճակում, ձմռանը լիովին անցանելի է:

Քարազուլիսի ներքին ճանապարհների երկարությունը 7 կմ է, իսկ միջին լայնությունը՝ 6 մետր: Գնապարհները հողային են, գտնվում են անմխիթար վիճակում, ձմռանը անցանելիությունը սահմանափակ է: Քարազուլիս վարչական միավորն ունի հարևան Աղնջաձոր վարչական միավորին կապող ճանապարհ:

Սալլիի ներքին ճանապարհների երկարությունը 3 կմ է, իսկ միջին լայնությունը՝ 6 մետր: Գնապարհները հողային են, գտնվում են անմխիթար վիճակում, ձմռանը անցանելիությունը սահմանափակ է: Սալլի վարչական միավորն ունի հարևան Յորս վարչական միավորին կապող ճանապարհ:

Թառաթումբի ներքին ճանապարհների երկարությունը 5 կմ է, իսկ միջին լայնությունը՝ 6 մետր: Գնապարհները հողային են, գտնվում են անմխիթար վիճակում, սակայն ձմռանը լիովին անցանելի են: Թառաթումբն ունի հարևան Աղնջաձոր վարչական միավորին կապող ճանապարհ:

Վարդահովիտի ներքին ճանապարհների երկարությունը 5 կմ է, իսկ միջին լայնությունը՝ 6 մետր: Գնապարհները հողային են, գտնվում են անմխիթար վիճակում, ծմեռային անցանելիությունը սահմանափակ է: Վարդահովիտն ունի հարևան Հերմոն վարչական միավորին կապող ճանապարհ:

17. Տրանսպորտ և կապ

Ինչպես արդեն նշվել է, համայնքի կազմի մեջ մտնում են 16 բնակավայրեր: Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար (օրիանակ, նախադպրոցական դաստիարակության կամ արտադպրոցական կրթության ոլորտի ծառայություններ) համայնքի բնակիչները շատ հաճախ կարիք են ունենում հասնել համայնքի կենտրոն կամ մոտակա բնակավայրեր: Այս առումով կարևոր է ներհամայնքային տրանսպորտի առկայությունը, որը կապահովի կապը համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի միջև:

Աղյուսակ 9. Շատին համայնքում առկա մեքենաների քանակը

Անվանում	Ընդամենը համայնքում	Ըստ համայնքի կազմի մեջ մտնող վարչական միավորների											
		Շատին	Աղմշածոր	Արտաբունք	Գողթանիկ	Եղեգիս	Թառաթումբ	Հերմոն	Հորբատեղ	Հորս	Սալի	Վարդահովիտ	Քարթալուխ
Մարդատար	412	154	37	16	4	13	33	8	21	21	8	30	67
Բեռնատար	147	38	8	22	4	3	28	2	4	8	3	7	20
Գյուղտեխնիկա	89	-	15	13	4	14	4	5	4	14	7	5	4
Ընդամենը	648	192	60	51	12	30	65	15	29	43	18	42	91

Համայնքի բոլոր բնակավայրերում առկա է հեռախոսային հաղորդակցության հնարավորություն: Համայնքում անհատական հեռախոսային բաժանորդների ընդհանուր թիվը կազմում է 1488 մարդ: Համայնքի բոլոր վարչական միավորները, բացառությամբ, Վարդահովիտի, գտնվում են բջջային կապի ծածկույթի տարածքում: Համայնքի բնակավայրերի մեծ մասում առկա է նաև ինտերնետային կապ: Փոստային ծառայություն նույնպես համայնքի ճիշտ է ոչ բոլոր բնակավայրերում, սակայն առկա է: Սահամանափակ է համայնքի բնակչության հեռուստացույց դիմելու հնարավորությունը: Համայնքի բնակավայրերից մեծ մասում հնարավոր է դիտել ընդամենը 2 հեռուստաալիք, իսկ Հորբատեղ, Հորս և Վարդահովիտ բնակավայրերում այլընտրանք չկա՝ առկա է 1 հեռուստաալիք (տես աղյուսակ 10):

Աղյուսակ 10. Շատին համայնքում կապի միջոցների առկայությունը

Անվանում	Ըստ համայնքի կազմի մեջ մտնող վարչական միավորների											
	Շատին	Աղնջաձոր	Արտաբույնք	Գողթանիկ	Եղեգիս	Թառաթունք	Հերմոն	Հորապետե	Հոս	Սալլի	Վարդապետ	Քարապետ
Հեռախոսային հաղորդակցության առկայություն	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
Տեղական ԱՅԿ առկայություն	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
Անհատական հեռախոսային բաժանորդների թիվ	360	93	450	20	40	100	42	24	70	49	20	220
Ինտերնետի առկայություն	+	+	+	-	+	+	-	+	+	+	-	+
Բջջային հեռախոսի ծածկվածություն	+	+	+	+	+	+	+	+	+	+	-	+
Փոստային ծառայության առկայություն	+	-	+	-	-	-	+	-	-	-	-	-
Հեռուստաալիքների թիվ	2	3	3	2	2	2	2	1	1	5	1	3

18. Առևտուր և սպասարկում

Շատին համայնքում թույլ է զարգացած առևտրի և սպասարկման ոլորտը: Համայնքում գործում են միայն առևտրի մանր կրպակներ և միայն համայնքի կենտրոնում բենզինի լիցքավորման 1 կետ: Համայնքում գործում են ընդհանուր թվով առևտրի մանր կրպակներ, որից Սալլի վարչական միավորում` 2 կրպակ, Եղեգիսում` 3, Գողթանիկում` 2, Հերմոնում` 2, Քարապետում` 3, Հորապետում` 2, Վարդապետում` 1, Թառաթունքում` 3, Աղնջաձորում` 3, Շատինում` 9, Արտաբույնքում` 5 և Հորս վարչական միավորում` 2 առևտրի մանր կրպակներ:

19. Գազամատակարարում

Շատին համայնքում գազամատակարարում չի իրականացվում: Համայնքի կենտրոնի հեռավորությունը ամենամոտ մայրուղային գազատարից, որից կարելի է սնվել, կազմում է 9 կմ:

20. Հողօգտագործում

Աղյուսակ 11. Շատին համայնքի հողօգտագործում

ՀՀ	Հողօգտագործում	Ընդամենը համայնքում (հա)	Ըստ համայնքի կազմի մեջ մտնող վարչական միավորների											
			Շատին	Ալմշածոր	Արտարունք	Գորթանիկ	Եղեգիս	Թառաթունք	Հեղմոն	Հորմատեղ	Հոլոս	Սալի	Վարդահովիտ	Քարազուխ
1	Ընդամենը հողատարածքներ, որից՝	27610.8	3310.6	3011.1	2465.0	2492.6	1372.2	1145.3	2915.6	954.4	2423.7	1683.1	3570.2	2267.0
	- համայնքային ենթակայության	24076.1	2899.8	2640.3	2183.3	2138.7	1174.7	996.2	2499.0	810.5	2032.2	1528.3	3202.3	1970.9
	- պահուստային	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	- սեփական /ՀՀքաղաքացիներ/	2704.5	268.5	330.8	271.8	205.9	160.4	136.6	108.0	114.5	375.4	142.8	332.8	257.1
	պետական	821.9	142.3	39.8	9.8	145.2	36.5	12.5	308.6	29.3	16.0	12.1	30.9	38.9
	ՀՀ իրավաբանական անձանց	2347.6	0.1	0.3	0.1	2.9	0.6	0.0	0.0	0.2	2339.3	0.0	4.2	0.0
2	Գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝	23755.8	2969.6	2903.2	2327.8	2291.9	1247.2	1057.5	2567.3	868.3	274.0	1643.3	3491.4	2114.5
	- վարելահողեր	1897.9	221.6	150.5	6.9	297.9	66.6	60.6	136.0	50.1	274.0	101.4	226.9	305.5
	- բազմամյա տնկարկներ	62.1	6.2	15.0	9.4		12.0	0.0	0.0	0.2	9.1	9.6	0.0	0.6
	- խոտհարքներ	1475.8	37.6	175.9	197.0	241.1	79.8	64.6	184.9	48.2	23.0	72.0	296.4	55.4
	- արոտավայրեր	10978.8	394.9	1378.9	1136.8	424.3	936.3	356.1	2000.7	608.6	486.9	603.3	2252.0	400.0
	այլ հողատեսքեր	11184.5	2309.2	1182.9	977.8	1328.6	152.5	576.3	245.8	161.3	1333.3	848.0	716.1	1353.0
3	Արդյուաբերական /ընդերք օգտագործման/արտադրական նշանակության	53.3	4.0	1.4	1.5	1.5	5.2	0.7	0.1	23.9	2.7	2.7	3.0	6.6

4	Հատուկ նշանակության հողեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
5	Հատուկ պահպանվող տարածքներ	101.4	18.7	15.0	6.8	0.3	17.3	3.7	22.7	1.4	6.8	4.7	0.5	3.5
6	Ջրային	196.4	39.7	22.8	9.4	10.8	17.4	6.3	19.8	8.7	25.3	3.1	12.2	20.8
7	Անտառային	517.3	106.3	0.0	0.0	136.3	1.5	0.0	273.2	0.0	0.0	0.0	0.0	0.0
8	Բնակավայրերի հողեր	868.5	166.3	59.7	118.1	49.6	78.6	75.3	32.4	49.2	46.6	35.9	39.6	117.4
9	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ	62.8	6.0	9.0	1.4	2.3	5.0	1.8	0.0	3.1	3.0	2.4	24.4	4.2

Աղյուսակ 12. Շատին համայնքի անմշակ գյուղատնտեսական հողերը

ՀՀ	Ցուցանիշ	Ընդամենը համայնքում (հա)	Ըստ համայնքի կազմի մեջ մտնող վարչական միավորների											
			Շատին	Աղնջաձոր	Արտաբունք	Գողթանիկ	Եղեգիս	Թառաթունք	Հեղմոն	Հորբատեր	Հոլս	Սալի	Վարդապետի	Քաղաքիկ
1	Ընդհանուր անմշակ հողերը	3623.4	16	40	1920	220	259.5	61.6	557	107.3	120	157	50	115
1.1	Աղակալած կամ ջրածածկ հողեր	1016.0	0	15	900	0	25	0	0	2	0	69	0	5
1.2	Տիրազուրկ կամ անտերության մատնված հողեր	428.4	0	5	20	12	47.5	59.6	0	5.3	90	69	50	70
1.3	Ոչ ոք չի ցանկանում վարձակալել	140.0	0	0	0	0	140	0	0	0	0	0	0	0
1.4.	Ականապատված հողեր	100.0	0	0	0	100	0	0	0	0	0	0	0	0

Համայնքի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում

Աղյուսակ 13. Շատին համայնքի բյուջեի եկամուտների քառամյա կանխատեսում

(հազ. դրամ)

Եկամուտներ	Ըստ տարիների			
	2011 թ.	2012 թ.	2013 թ.	2014 թ.
ԸՆԴԱՍԵՆԸ ԵՎԱՍՈՒՏՆԵՐ	108,750.0	111,555.0	114,930.0	118,390.0
1. Սեփական եկամուտներ	26,750.0	29,555.0	32,930.0	36,390.0
1.1. Հարկային եկամուտներ, այդ թվում՝	13,930.0	15,680.0	18,000.0	20,400.0
<i>Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար</i>	<i>250.0</i>	<i>380.0</i>	<i>500.0</i>	<i>600.0</i>
<i>Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար</i>	<i>8,680.0</i>	<i>10,000.0</i>	<i>12,000.0</i>	<i>14,000.0</i>
<i>Գույքահարկ փոխադրամիջոցների համար</i>	<i>5,000.0</i>	<i>5,300.0</i>	<i>5,500.0</i>	<i>5,800.0</i>
1.2. Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	500.0	550.0	600.0	650.0
